

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2016թ. 25.10. թիվ 57 Ա
որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 թ -ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2016թ-ի տարեկան բյուջեն երրորդ եռամսյակում կատարվել է եկամուտների գծով 96,0 %-ով, նախատեսված 80035.3 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 76804.4 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 13675.8 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 11459.7 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 83.8%: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից՝ տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 61494.2 հազ. դրամը տրվել են ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 59891.9 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%, այլ դոտացիան՝ 1602.3 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0% :

1. Բյուջեի վարչական մասի եկամուտները

2016 թ-ի երրորդ եռամսյակում բյուջեն վարչական մասով նախատեսված էր 78265.3 հազ. դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 75034.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 95.9 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 13675.8 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 11459.7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 83.8 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 61494.2 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով . տրամադրվող դոտացիաները՝ 59891.9 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%, այլ դոտացիան՝ 1602.3 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0% :

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2016 թ-ի երրորդ եռամսյակում նախատեսված էր 6728.6 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 5350.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 79.5 %:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 350.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 357.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 102.2%, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 6000.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 4777.1 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 79.6 %:

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 597.2 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 974.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 163.2 %:

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2016թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 3095.3 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 2080.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 67.2 %, այդ թվում հողի վարձավճարը նախատեսված էր 2300.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմում է 2197.4 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 95.5%, գույքի վարձակալության պլանը նախատեսված էր 20.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմում է 28.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 140.0%, պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նախատեսված էր 5434.3 հազ. դրամ, որից այս եռամսյակում տրվել է 4978.2 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 91.6%:

5) Պաշտոնական. ընթացիկ տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 61494.2 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 59891.9 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100.0%, այլ դոտացիան՝ 1602.3 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100.0%:

2. Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները

ա) Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված էր 1770,0 հազ. դրամ, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100 %:

3. Բյուջեի վարչական մասի ծախսերը

Բյուջեի վարչական մասի ծախսերը երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 78265,3 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 68870,1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 88,0 %:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

ա) Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2016 թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված 44266,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 39285,6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 88,7 %:

բ) Տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը նախատեսվել է 420,0, փաստացի ծախսը կազմում է 350,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 83,3 %, այդ թվում ճանապարհային տնտեսության համար նախատեսված էր 250,0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսը կատարվել է 100,0%-ով, զբոսաշրջության համար նախատեսված էր 170,0 հազ. դրամ, որից տրվել է 100,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 58,7 %:

- գ) Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 5680,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 4510,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 79,4 %, այդ ծախսը կատարվել է համայնքի աղքատացումը իրականացնելու համար:
- դ) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության համար նախատեսված ծախսը կազմում է 1975,0 հազ. դրամ, փաստացի ծախսը 1440,5 հազ. դրամ է կատարման տոկոսը 72,9%, այդ թվում ջրամատակարարման համար նախատեսված է 625,0 հազ. դրամ, այն տրվել է անբողջությամբ, կատարման տոկոսը 100%, փողոցների լուսավորության գծով ծախսերը 1350,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 815,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 60,4 %:
- ե) Առողջապահության համար նախատեսված ծախսը՝ գումարով 300,0 հազ. դրամ, տրվել է անբողջությամբ:
- զ) Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգման համար նախատեսված էր 660 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմում է 283,7 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 43,0% :
- է) Կրթության համար 18245,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 16722,0 հազ. դրամ՝ կամ կատարման տոկոսը 91,7 %, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 12170,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 11175,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 91,8 %, արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված էր 4740,0 հազ. դրամ, որի համար փաստացի ծախսը կատարվել է 4245,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 89,6 %, իսկ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների գծով ծախսերը նախատեսված էր 330,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 275,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 83,3 % :
- զ) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 1195,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 1000,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 83,7 % :
- ը) Պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նախատեսված էր 5434,3 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել 4978,2 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 91,6 % :

2). Ըստ տնտեսագիտական դասակարգման 2016 թ-ի բյուջեն երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված ծախսերը կատարվել են՝

- ա) Աշխատողների աշխատավարձերի և ավելավճարների համար նախատեսված 36100,0 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս՝ 33128,9 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 91,8%:
- բ) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 22725,3 հազ. դրամի դիմաց կատարվել է փաստացի ծախս 18019,2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 79,3 %:
- գ) Ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ նախատեսված էր 18245,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 16722,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 91,7 %:
- դ) Սոցիալական ապահովագրության ծախսերը՝ այդ թվում բյուջեից այլ նպաստները նախատեսված էր 1195,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 1000,0 հազ. դրամ ծախս:

ե) Այլ ծախսերը նախատեսված էր 350,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 100,0 հազ. դրամ փաստացի ծախսվել է՝ 28,6 %:

3. Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները առաջացել են հողի իրացումից՝ 24,0 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդից՝ 1924,4 հազ. դրամ և կապիտալ ոչ պաշտոնական տրանսֆերտներից՝ 1770,0 հազ. դրամ:

4. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2016թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի ֆոնդային մասով նախատեսված էր 9458,7 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս կատարվել 5508,8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 58,2 %:

ա) Վարչական սարքավորումների ձեռք բերման համար նախատեսված էր 1591,7 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 159,7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 10,0 %:

բ) Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման համար նախատեսված էր 70,0 հազ. դրամ ծախս, կատարվել է ծախսը ամբողջությամբ:

գ) Զրամատակարարման համար նախատեսված էր 126,8 հազ. դրամ ծախս, այն կատարվել է ամբողջությամբ:

5. Համայնքի բյուջեի հավելուրդը կամ պակասուրդը (դեֆիցիտը)

Համայնքի բյուջեի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 1924,4 հազ. դրամ, որը ուղղված է բյուջեի ֆոնդային մասի ծախսերին:

Թումանյան համայնքի ղեկավար



/Լ. Զավարյան/